

89

ՄԱՏԱԹԻԱ ԱԽԱԼԵԱՆՑ

# ՏԱՅԻԿՆԵՐԻ ԽՈՒԺԵԼԸ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՏ

ՖԱԶԱՍԻՐՏ ԱՂՋԻԿ

○○○○○○○○○○

ԹԻՖԼԻԶ

արտի Ն. Ազանեանի, Պոլից. 7

1914

891.99  
ԱՀ - 77

821.99  
4-77

8705 50 85

01 JAN 2009

ՄԱՏԱԹԻԱ ԱԽԱԼԵԱՑ

19 NOV 2010

# ՏԱԶԻԿՆԵՐԻ ԽՈՒՃԵԼԸ

## ԿՈՍԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

37126

○○○○○○○○○○

Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տպարան Ն. Աղանեանի, Պոլից. 7

1 9 1 4

20.02.2013

0005 ԽԱ. 1.0

200.00

## ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻՆ

Հապա մեր քաջ կամաւորներ,  
Հայոց անվախ զինուորներ,  
Առաջ անցէք ազգք զարմանան,  
Հայերը ձեզ վերայ յուսան։  
Յաղթական սուր աջ ձեռք բռնած  
Որ թուրքի վրէժով է արբած,  
Զախովդ փողը ի մեծ թընդիւն  
Հընչեցուցէք մեծ «Յաղթութիւն»։  
Յանկարծելիդ այդ աւետիս,  
Թհնդ արձագանք տայ մեր Մասիս.  
Հայք գարթընեն ի ձեր դղորդ,  
Թոթւեն շըղթան և ամօթ,  
Զեր ետկից վազեն գունդ-գունդ,  
Ամէն սըրտեր թոշեն իթունդ,  
Եւ թընամիք մեր սարսափին,  
Գընդակահար ի վայր թափին։  
Հապա մեր քաջ կամաւորներ  
Հայոց անվախ զինուորներ.  
Թօթափեցէք շանթեր ու ոռւմբք  
Տապալեցէք բերդեր և թումբք,  
Հայերիս նոր մեծ բանակին,  
Դուք եղէք ոյժն ու ողին,  
Յառաջապահ դուք վազեցէք,  
Եւ զ'Հայս ձեր ետքից կանչեցէք,  
Օ՞ն, կանչեցէք ամպք որոտան,  
«Ազատես դու խեղճ Հայաստան»։

## ՏԱՅԻԿՆԵՐԻ ԽՈՒԺԵԼԸ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

I

Մեր պատմութիւնից երևում է որ Հայոց ազգի ամենասոխերիմ թշնամին եղել է Յոյն ազգը. սա կործանեց Բագրատունեաց հզօր թագաւորութիւնը. սրանց խորամանկութեամբ Անի քաղաքի բանալիները Վես Սարգսի և Կիրակոս քահանայի ձեռքով յանձնուեցին Յունաց թագաւորութեան ձեռքը, որովհետև մեր բագրատունեաց Գագիկ թագաւորին խարէութեամբ հրաւիրել էին կոստանդնուպօլիս և այնտեղ չարամտութեամբ բանտարկել մինչև Անի մայրաքաղաքին խորամանկութեամբ տիրելը. իսկ երբ տիրեցին վերջացրին, Գագիկ թագաւորին թողին տպատ, որը դատարկ մնալով տարակուսած շըրջում էր Հայաստանի մէջ անիծելով մատնիչներին, որոնք իրենց պանծալի հայրենիքը յանձնեցին այլազգուն և կործանեցին իրենց թագաւորութիւնը:

Գագիկը շրջելով թագաղուրկ երկրի մէջ,

լսում է որ Յունաց մի միտրոպոլիտ իր շան անունը «Արմէն» է դրել. Նեղութիւնը զսպել չկարողանալով՝ վերցնում է իւր ծառաներից մի քանիսին գնում են միտրոպոլիտին այցելութեան, ճանապարհին պատուիրում է իւր ծառաներին որ երբ յոնքով նշան տայ՝ իրենց ափրոջ հրամանը կատարեն:

Ճանում են միտրոպոլիտի տունը, ներս են գնում, համբուրում են նրա ձեռքը, նստում են խօսում, խօսք է բացւում, թէ միտրոպոլիտը մի լաւ շուն ունի:

— Այն է, ասում է միտրոպոլիտը և կանչում է շանը «Արմէն, Արմէն». շունը մօտենում է:

Գագիկը զարմացմամբ հարցնում է միտրոպոլիտին թէ ինչու շանը «Արմէն է» կանչում: Մետրոպոլիտը պատասխանում է.

— Փոքրիկ լինելով՝ «Արմէն» անունը տուի:

Գագիկը աչքով յօնքով հրամայում է իւր ծառաներին, սրանք իսկոյն յարձակուսում են միտրոպոլիտի վրայ, ձգում են նրան և շանը հետը բերած քսակի մէջ բերանը կապում և սկսում են շանը այնչափ ծեծել, որ ցաւից կծոտում է միտրոպոլիտին և երկուսը միասին անշնչանում են:

Այս լուրը տարածում է երկրում, յոյները չափազանց կատաղում են, մի օր Գագիկը կի-

զիստրիա բերդի մօտից անցնելիս, բերդապահն ները յարձակում են նրա վրայ, սպանում, և կաշին քերթում մէջը խոտ լցնելով՝ կանգնեցնում են բերդի պարսպի վրայ ի տես անցուդարձ անողների, բայց հայերը դողանում են դիակը տանում են թաղում։

Յոյների Հայերին պատճառած վնասները անթիւ, անհամար են, Պարսիկը եթէ հային նեղացնում էր, պատճառը կրօնն էր, իսկ յոյները որ քրիստոնեայ էին, ինչն էր ուրեմն նրանց դրդում մի դրացի տէրութեան գահը խորաման կութեամբ յափշտակել և տէրութիւնը կործանել։

Աշխարհիս բաները անքննելի են, յաւիտենական ոչինչ չկայ, Սողոմոն իմաստունը ասում էր «Ազգ գայ, ազգ գնայ, և երկիրս յաւիտեան մնայ»։ Մի ժամանակ Հոռվմայեցիք ամբողջ Եւրոպային և մասամբ էլ Ասիային և Աֆրիկային տիրել էին, այսօր ուր է մի Հոռվմայեցի որ իրեն անցած գնացած փառքովը պարծենալ կարողանար, բնաջինջ եղան բալորովին+ Ալեքսանդր Մակեդոնացին իրեն յաղթական բանակներով տիրեց Ասիայի մեծ մասին, հիւսիսային Աֆրիկային, Սահարա անապատին, շինեց Ալեքսանդրիա քաղաքը Եղիպտոսում, մեռաւ Բաբելոնում զինու ազգեցութեան տակ 33 տարեկան, այսօր նրա Մակեդոնիա երկիրը անտէր

անտիրական կոռուածաղիկ է դարձել զանազան փոքր տէրութեանց մէջ

Առհասարակ ընդունուած է, որ ոչ ոք մինչև վերջը միևնոյն փառքով կենդանի մնալ չի կարող, եթէ թելի կծիկը քանդուի, շարունակ պիտի յետ տայ մինչև վերջը։

Յոյները կատաղել էին, բայց Աստուծոյ պատուհասը վրայ հասաւ, նա բաժին դարձաւ մի ուրիշ աւելի կատաղի ազգի, որը յոյնի բումբուլը քամուն տուեց. այս կատաղի ազգը՝ Տաճիկը, մի քանի դար սարսափեցրեց հարաւային Եւրոպային, բայց յետոյ թելի կծիկը սկսաւ յետ տալ և այսօր վերջին ճգնաժամի մէջ է և զարկերակը աստիճանաբար թուլանում է մինչև մի անգամ ընդ միշտ կը դադրի խփելուց և հոգին կը տայ իւր կամակորութեանը զոհ գնացած ազգերին։

## II

Պատմենք թէ Օսմանեան Սուլթան Մահմէտ Ֆաթիհը, ինչպէս յաղթեց Յոյներին և տիրապետեց նրանց պանծալի, սքանչելի կ. Պօլիս մայրաքաղաքին, որ ամէն մի տէրութիւն ատամները սրած աշքերը չուած երազում է նըրան ձեռք ձգելուն.

1453 թ. Մայիս ամսին Սուլթան Մահմէտ Ֆաթիհը երազում տեսնում է, որ ինքը կ. Պօ-

լսի տէր էր դառել, զարթնում է քնից և  
մարգ է ուղարկում իւր մեծ վեզիր Խալիլ  
փաշային կանչելու:

Հստ սովորութեան, երբ Սուլթանը անժաշ-  
մանակ վեզիրին իր մօտ է կանչում, վեզիրը  
Սուլթանին ձեռնունայն ներկայանալ չի հա-  
մարձակուի, ուստի Խալիլ փաշան ներկայանում  
է Սուլթանին ձեռքին մի սկաւառակ լի ոսկով.  
Սուլթանը մի կողմ դնելով սկաւառակը, ասում  
է վեզիրին, որ նա երազում տիրել էր Կ. Պօլ-  
սին, ինչ պիտի անենք որ իմ երազս կատար-  
ուի:

Վեզիրը պատասխանում է.

— «Կեցցէ մեր մեծ Սուլթանը, — Մենք նրա  
հպատակները մեր արիւնը անխնայ կը թա-  
փենք, որ Սուլթանի ցանկութիւնը կատարուած  
լինի:

— Դէ, վաղուանից կարգադրութիւն արա,  
զօրք հաւաքէ, զինէ նրանց, նաւատորմիզը կազմ  
և պատրաստ պահէ և անհրաժեշտ արշաւենք Կ.  
Պօլսի վրայ, դէ գնա:

Վեզիրը գնում է և միւս օրը բոլոր հրա-  
մանները տալիս է զօրահաւաքի և սպառազինու-  
թեան համար:

Վերջին մահագուշակ ժամը խփել է Կ.  
Պօլսի համար. Սուլթան Մահամէտ Ֆաթիհը պա-  
շարեց մայրաքաղաքը 300,000 զօրքով:

Այս քաղաքի շքեղ մեծութիւնը, ամուր գիրքը  
իր ունեցած փառաւոր պարձանքները, հաստ  
պարիսպները, իր սպառնալից աշտարակները,  
խոր փոսերը, երկու ծովերը՝ որոնք իրենց  
պաշտպանութիւնն էին և որոնք ինքը իր հետն  
էր միացնում, վերջապէս ցամաքի կողմը պաշտ-  
պանող բերդերը՝ որոնք մինչեւ այն՝ անառիկ  
էին:

Երեսուն անգամ այս քաղաքս պաշարուած  
էր և երեսուն անգամ էլ Տաճիկների և բարբա-  
րոսների ահարկու բանակները փախցրել էր և  
նրանց նաւատորմիդները այրել, Բայց այս մի-  
ջոցիս ամէն հանգամանք փոխուած էր, բացի  
իր արտաքին երեսյթից, այս հսկան մի անհոգի  
դիակ էր. իր բարձր պարիսպները կարօտ էին  
քաջ բազուկների պաշտպանութեան. այդ բա-  
զուկները թշնամու դէմ տարածելու փոխարէն,  
դէպի երկինք էին բարձրացնում գթութիւն  
խնդրելու համար:

Կոնստանդին Պալէոլոգ Յունաց կայսրը մայ-  
րաքաղաքի մէջ աշխարհագիր անել տալով՝ ի-  
մացաւ, որ քաղաքը 200000 բնակիչ ունէր, բայց  
երբ որ քաջասիրտների համբելու կարգն եկաւ,  
հազիւ թէ 4970 հոգի պատերազմող գտնուեց,  
որոնք դեռ չոռվածացի կոչուելու արժանի էին,  
ինչպէս որ իրենք իրենց անուանում էին և ու-  
րիշ 2000 հոգի օտարազգի զինուորներ էլ միա-

ցան այս քաջերի փոքրիկ խմբի հետ:

Տաճիկները 14 մարտկոցներից աւելի դըղրդացնում էին քաղաքի պարիսպները, քան թէ նրանց մեծ վնաս հասցնում:

Յունաց 7000 պատերազմողները, որոնք իրօք Թերմոպիլէի \*) դիւցազներին հաւասար լինելու արժանի էին, 300,000 մարդկանց դէմ մի այնպիսի քաղաք էին պաշտպանում, որի շրջապատը մեծ տարածութիւն ունէր:

Առաջին օրերը փոխանակ վախկոտութեամբ պարիսպների մէջ մնալու, յանդկնութեամբ դուրս յարձակուեցան, խփուեցին քաղաքը պաշարողների հետ և հիմնայատակ կործանելով նրանց պատնէշները՝ թշնամու գօրքին սարսափ լցրին:

Բայց Կոնստանդին կայսրը իր պատճառած վնասը ի նկատի առնելով՝ շուառով իմացաւ, որ այսպիսի յաղթութիւններով փոխանակ վտանգը հեռացնելու՝ կործանումին աւելի էր մօտենում և թէ 20 տաճիկի մահը չէր կարող համեմատել իւր սակաւաթիւ բերդապահ քաջ զորքերից մէկի մահուան հետ:

Երբ որ Յոյները դադրեցին Տաճիկներին

\*) Թերմոպիլէ մի կիրճ է Յունաստանի մէջ, ուր չին ժամանակները Սպարտացոց Լէոնիդաս թագաւորը իր քաջերով ջարդեց պարսից Քսերքսէս թագաւորի ստրափելի բանակը և ցիրուցան արեց:

վնաս հասցնելու, նրանք իրենց պատնէշները ամրացրին. շատ աշտարակներ կործանեցին, առաջին պարիսպներին շատ վնաս հասցըին և փորձեցին սանդուխներով բերդի վրայ բարձրանալ, միւս կողմից էլ ական փորողներն էին աշխատում գետնի տակից գաղտնի ճամբայ բանալու: Նոյն միջոցին 300 հատ զանազան տեսակի նաւեր (այժմուան Դրունառուա և որրիշ զրահանաւեր չկարծէք) ջանք էին անում կտրել այն շղթան, որ փակել էր նաւահանգստի անցքը:

Իսկ պաշարուածները, անձրեի պէս նետեր, հրացանի գնդակներ և ոռումբեր էին թափում յարձակուողների վրայ, մեծամեծ ժայռի կտրտանք և երկայն քարեր էին գլորում նրանց վրայ:

Յունական կրակը այրեց լափեց փայտաշէն աշտարակները, որ Սուլթան Մահամէտն էր շինել տուել իր պատուանդանների առաջ:

Յունաց նիզակներն և տէգերը փոսերումը գլորում էին բազմաթիւ Տաճիկներին, որոնք բանի տեղ չդնելով որկիցէ արգելք, մօտենում էին պատերի տակին:

Այդ միջոցին, երբ այս անընկճելի պատերազմը երկու կողմից էլ կատաղաբար շարունակուում էր, Տաճկաց մի գունդ ական փորողներից առաջնորդուելով մտաւ մի ստորերկրեայ ճամբի մէջ

և առաջ գնաց, անհամբերութեամբ ցանկանաւով քաղաքի մէջ տեղը դուրս գալ. բայց Գըանդ ճարտարապետը սրանց ոտնաձայնն և հարուածների բախիւնը լսելով՝ ինքը ուրիշ ական փորել տուեց; առաջները դուրս եկաւ պատերազմ, կրակով ու ծուխով ծածկեց և ստիպեց յետ փախչելու.

Նաւահանգստի շղթան Տաճկոց նաւատորմիղի համար անյաղթելի դժուարութիւն եղաւ. Յունաց նաւերը այս պատաստարանի մէջ կանդնած՝ մէծ վնաս հասցրին և ցրիւ տուին թշնամեաց նաւերը, հազարաւոր տաճիկներ փոխանակ փոսերից անցնելու, նրանց իրենց դիակներով լցրին. և, այս դիակների կոյտերը իրենց ընկեր զինուորների արիւնը սառեցրին:

Յանկարծ օդում մի լուսաւոր երկոյթ տեսնուեց. Տաճիկները սարսափած մի չարագուշակ նշան համարեցին այն, իսկ ընդհակառակ Յոյները, իբրև փրկութեան ու յաղթութեան աւետարեր նշան. վերջապէս բաղդը քրիստոնէից ձեռքը տուեց յաջողութիւնը և տաճիկները սաստիկ յոգնած լինելով՝ նորից իրենց ամրութիւններում ապաւինեցան, և, օրհասական քաղաքը դարձեալ յաղթութեան բարենշան մի օր տեսաւ:

Երկրորդ օրը պաշարողները ուզեցին յարձակումը կրկնել. բայց Սուլթան Մահամէղը զար-

մացած մնաց՝ երբ արշալոյսը բացուելու ժամանակ տեսաւ որ անխոնջ կայսը գիշերը ցերեկ էր դարձրել աշխատութեամբ. Յոյները արագութեամբ նորոգել էին փուլ եկածները, և աշտարակներն ու պարիսպները նորից շինել:

Սուլթանը ժողով հաւաքեց և իր կարծիքը սիրով ընդունուեց, սակայն պատերազմը կրկնելուց առաջ բանակցութիւն արեց, առաջարկեց կոնստանդին կայսրին, որ եթէ Կ.Պոլիսը Տաճկաց տայ, բոլոր Յունաստանի վրայ խաղաղութեամբ կը թագաւորէ: Բայց կայսը պատասխանեց. «կամ իմ մայրաքաղաքս պիտի ազտեմ կամ նրա աւերակների տակ պիտի թաղուիմ. միայն հարկ տալ կարող եմ»: Երբ որ այս պատասխանը Սուլթանին հասցրին, նա բարկութեամբ կանչեց. «Երդուում եմ յանուն Մարգարէի (Մահամէտի), որ Կ.Պոլիսը կամ իմ աթոռս պիտի լինի կամ գերեզմանս»:

Այս խօսքերից յետոյ եէնիչերիներին պատերազմի հրաւիրեց, ամէնին հրատարակեց որ ընդհանուր յարձակում պիտի անէր 1453 թ. 29-ին մայիսի և որպէսզի պատերազմը յաջողութեամբ վերջանայ, նախընթաց գիշերը ծոմապահութեան և նամազ անել ստիպեց բոլոր զօրքին: Նոյն իրիկուն և գիշերը վրանները լուսաւորեցին, դերվիշները բոլոր բանակի մէջ վեր վար էին պտըտում և կարծես ամբողջ բա-

նակը մզկիթ էին դարձրել, իսկ իմամբները զօրքի կրօնական զգացմունքները աղօթքով էին վառում: «Այդ պիհծ քաղաքի մարդիկ, կանայք և հարստութիւնները ձերն են, ասաց Սուլթան Մահամէտը, իսկ ես թագաւորական գահը և շէնքերը միայն ինձ կ'առնեմ, իսկ նրանք՝ որոնք ուրիշներից առաջ պարիսպներից անցնեն, փառքով և պատուով պիտի լցնեմ»:

Այս խոստմունքը, փառաց տեսչը, և հաճոյից ու աւարառութեան անկուշտ ծարաւը շարժեցին, պատերազմական ոգուով բռնկեցրին զօրքը:

Սրանից յետոյ Սուլթան Մահամէտը մի մեծ գործողութեան ձեռնարկեց, որ մարդկային մտքից չէր անցնի: Սաստիկ նեղանալով, որ նաւահանգիստ մտնելու համար իր առաջ մեծ արգելք կար, բոլոր նաւերը ցամաքում քաշել տուեց, անհարթ, լեռնոտ, մացառոտ և մի քանի վերստաչափ ճամբան դրստել տուեց և գետինը տախտակներ ձգելով վրէն ճրագու քսել տուեց: Նաւատորմիղը այս սահուն ճամբի վրայից քաշեցին և Ղալաթիայի ետեից պտըտեցնելով բոլոր նաւերը նաւահանգիստը իջեցրին: Այս հիանալի գործողութիւնը կատարուեց զօրքանակի աշխատութեամբ մի գիշերուայ մէջ:

Առաւոտեան Յոյները սարսափած մնացին՝ երրոր պարիսպների վրայ տեսան նաւահանգիս-

ոը, որի վրայ միայն դրած ունէին իրենց ազատութեան յոյսը՝ Տաճկաց նաւերով ողողուած: Բայց Կոնստանտին Կայսրը այս վերջին վտանգին իր անվրդով արիութիւնը չկորցրեց: Փողովեց իր զօրքերը, գումարեց բոլոր մեծամեծներին և ծերակոյտը:

«Իմ ընկերներ, ասաց, հասանք այն ժամին՝ որ կամ մեր վերջին յաղթութիւնը պիտի լինի և կամ վերջին վայրկեանը. մեծ են մեր վտանգները, բայց հաստատուն քաջութիւնը ամեն բանի կը յաղթէ: Զեր նախնիքների գէմ բոլոր աշխարհք զէնք առաւ և իրենք յաղթեցին ամէնքին, շատ դարել գէմ դրինք Պարսիկնենին, Սարակինոսներին, Սկիւթացիներին, Բուլղարներին, Հոներին և անթիւ բարբարոսների յարձակումներին: Նոյն իսկ այս Տաճիկները, որ հիմա մեզ ուզում են ոչնչացնել, շատ անգամ են մեղանից յաղթուել. մեր ներքին երկպառակութիւնները նրանց զօրութիւն են տալի. միաբան լինինք և կըտեսնէք որ նրանք չըպիտի կարողանան մեզ գէմ գնել»:

«Տասը քսան անգամ մեր պարիսպների տակ նրանց զօրութիւնը խորտակուել է, և քիչ ժամանակ է որ Մուրադին (Սուլթան Մահամէտի հայրը) մեր ամրութիւններից հեռացըինք, գեռ մի քանի օր է, որ ձեր քաջութեամբ Մահամէտի զօրքերը վնադեցիք, մեր խրամները,

մեր դաշտերը և նոյն իսկ իրենց պատճէշներն էլ իրենց վիրաւորներով և մեռածներով են ծածկուած։ Այս նոր յարձակումը, որ Սուլթանը պատրաստում է մեզ դէմ՝ վերջին յուսահատական փորձն է։

«Եւրոպան ահաւասիկ ոտքի է կանգնում մեզ օգնելու։ Հունիատ սպարապետը իր Ունգարացիներով մօտենում է։ Վենետիկեցիների նաւախումբը կտրելով ծովը մեզ օգնելու է գալիս, մի օր էլ քաջանանք, և ամեն բան կազմառուի։

«Պաշտպանենք այն բաները, որ մարդկանց համար սրբազն են, այսինքն կրօնը, մեր հայրենիքն և մեր ազատութիւնը։ Սհաւասիկ ես ձեզ օրինակ եմ տալի. թէ որ ձեզանից մէկի հետ անիրաւ եմ վարուել, իբրև թագաւոր, իբրև եղբայր, իբրև քրիստոնայ ներումն եմ խընդրում նրանից։

«Փառքը մեզ սպասում է, հայրենիքը մեզ կանչում է, մեր դիւցազների ստուերները մեզ են նայում. հապա առաջ երթանք, ես ձեզ հետ մէկ տեղ պատերազմի ամէն վտանգներին մասնակից կը լինեմ, ինչպէս նաև յաղթութեան ամէն բարիքներին, բայց թէ որ Կ.-Պոլիսը մեր ձեռքից գնայ, թէ որ իմ քաջ ընկերներս մեռնին, ես էլ չեմ կարող ապրել նրանցից յետոյ։

Այս ճառին, որ կայսերութեան ընկնելու վրայ մի դամբանական էր, արտասունքներով և հեծութեամբ միայն պատասխանեցին. ամենքն էլ երդուեցին կամ յաղթել և կամ մեռնել։

Տաճիկների թնդանօթների ձայնը լսուեց և պատերազմի նշան տրուեց, Կոնստանդինը մէկ էլ գնաց պալատը, գրկախառնեց իւր ընտանիքի հետ, հագաւ զէնքերը, մի քանի վայրկեանից դուրս գնաց կայսերական պալատից, որ մէկ էլ չէր տեսնելու։

Արշալոյսը որ ծագեց՝ Տաճիկներն սկսան թէ ծովից և թէ ցամաքից ընդհանուր յարձակումները, իրենց թնդանօթները պարիսպներին մօտեցրին. Տաճկաց գունդերը այնպէս խիտ առխիտ, այնպէս առաջ էին գալիս, որ մի պատմագիր նրանց երկայնաձիգ թոկի էր նմանեցնում։ Պարիսպների մէջ, որոնք շտապով նորոգուած էին, թնդանօթի հարուածներին չդիմանալով, լայն պատուածքներ բացուեցան, որտեղից Տաճիկները խմբովին ներս յարձակուեցան կամ յաղթութեան պսակին արժանանալու, կամ կրօնի վրայ մեռնելու տենչանքով։ Կոնստանդինի աներկիւղ ընկերները, որոնց յաղթել աւելի դժուար էր քան թէ քաղաքի բերդերը կործանելը, ետ մղեցին այս առաջին յարձակողներին, կրակ թափեցին վրաները և փոսերի մէջ էին գլուռում։ Երկինքը նետերի բազմութիւնից չէր ե-

ըեռւմ և հրայանի գնդակների սուլելն և թընդանօթների ահաւոր ճայթմունքները մարդուսականջն էին խլացնում:

Պատերազմից բարձրացած փողին և մուխը, պատերազմողների չորս կողմը մթնացրել էր, բայց բոպէ առ բոպէ վասովի և յունական կրակի բոցովը օդի մէջ մի լոյս էր ցոլում. Ամէն կողմից աղաղակներ, անէծքներ, աղօթքներ էին լսուում, ժողովրդին ոտքի հանելու զանգակներ էին զօղանջում, պղինձների բոմքին, զէնքերի շառաչմունք, ատելութեան և վրէժխնդրութեան գոչումներ, սրածայն փողերի, պատերազմական երգերի և մեռնողների հեծեծանքի ձայն:

Սուլթանը քաջալերեց իւր յաղթուած զինուորներին և նոր զօրքերը յարձակումները կըրկնեցին. Ինքը Սուլթանը գլուխը անցած՝ իր զօրաւոր ձայնով նրանցնախանձայուզութիւնն էր գրգռում, իսկ ետևն էլ դահիճներ կանգնած, որպէսզի կամ պատուածքների մէջ մեռնին կամ յետ փախչելու միջոցին:

Տաճիկների գունդերը պաշարուածների վրայ շարունակ կրակ էին թափում, որոնք արհամարհում էին թշնամիների ճիգը, փոսերը որ հազարաւոր դիակներով էին լցուել, ետքից եկող զօրքերի համար կամուրջի դեր էին կատարում:

Կոնստանդինը նորից Յոյներին բորբոքեց՝ որ

վերջին ջանքն ի գործ դնեն փրկելու իրենց թագաւորին, իրենց կրօնը, հայրենիքը և պատառուածքից կատաղաբար դուրս յարձակուեց, զարկեց, ջարդեց ցիրուցան արեց յարձակողներին և նրանց ստիպեց բանակը քաղաքից հեռացնելու:

Այսափ յաղթութիւններից յետոյ, քրիստոնեայ գիւցազների թևերում էլ քաջութիւն չէր մնացել և արիւնը սառել էր երակներում, որովհետև թշնամիների անթիւ բազմութիւնը միշտ աւելանում էր իրար ետևից:

Այս միջոցին Եէնիչերիները, որոնց Սուլթանը պահեստի էր պահում և զեռ պատերազմած չէին, շարժեցին տեղերից և սկսան դէպի առաջ գալ:

Սուլթան Մահամէտը ճիով առաջ էր զնում զախտը ձեռին և ընտրած թիկնապահների մի խումբ նրա չորս կողմը բռնած ունէր, ձայնով և ձեռվ շտապեցնում էր նրանց. դիակների կոյտերը զօրքին պարիսպների վրայ բարձրանալուն օգնեցին և պատերազմական երաժշտութիւնը, ահարեկների աղաղակները և վիրաւորուածների հեծեծանքը թագցնելով՝ յարձակողներին խրախոյս էր տալի:

Յոյները ի միասին եկան և իրենց բոլոր զօրութիւնը, այս վերջին վտանգի դէմ սկսան ի գործ դնել թնդանօթների որոտմունքը, սու-

բերի և գաշոյնների բարախմունքների շառաչիւնը աւելացնում էին իրենց շփոթութիւնը:

Հասան անունով մի ԵԷնիչերի զարմանալի ոյժով ամէնից առաջ յարձակեց պարսպի սեպերի վրայ, բայց շատ սրերից վիրաւորուելով և շատ նիզակների հարուածներ ստանալով՝ վայր ընկաւ, ոտքի ելաւ, նորից մտաւ պատնէշը և նորից վայր ընկաւ՝ մեռած, բայց յաղթական իր ետևից սկսան ներս խուժել վրէժինդրութեամբ ծարաւի մարդկանց խուռն բազմութիւն և իրենց թուփ գերազանցութեամբ քաջասիրաներին յաղթեցին, առաջին պարիսպները առնուել են: Վերջապէս մի դժբախտ դէպք նոյն օրուայ վիճակը որոշեց, վասնզի ծիւողինիանի<sup>\*)</sup> զօրավարը վիրաւորուելով էլ զէնք շարժել չըկարողացաւ, նա պատերազմից հեռացաւ և մի նաւակ մտնելով ճամբայ ելաւ դէպի Արխիպելագոս պատուից և մահից միանգամայն փախչելով: Նրա քաշուելուց յետոյ զօրքի սիրտը լքացաւ: Կոնստանդինը ջանք արեց նրանց ժողովել և կարգի դրած երկրորդ պարսպի դէմ դնել, բայց այլևս նրան մտիկ չարին: Ամենքը վախից սարսափած՝ մի նեղ ճամբի վրայ վազեցին, բայց իրենց բազմութիւնից նրա ճանա-

<sup>\*)</sup> Սա մի Ճենովացի էր, որ 2000 օտարազգի զօրք էր կառավարում:

պարհը փակուեց: ԵԷնիչերիները կատաղած նըրանց վրայ յարձակուեցին և սաստիկ կոտորում էին նրանց, որովհետև այլևս պատերազմ չէր, բոլոր այս քաջերը Տաճկաց սրից անցան:

Կոնստանդինը յուսահատած սկսաւ կանչել, «Զկայ մի քրիստոնեայ, որ իմ կեանքս վերցնելով ինձ գերութեան նախատինքից ազատել կարողանայ և կամ Տաճկաց ձեռքից մեռնելու վիճակից»: Այս խօսքիս պատասխան տուող չեղաւ, բայց ինքը կայսրութիւնը կորցնելուց յետոյ մի բոպէ էլ ապրել չհամբերելով՝ թշնամիների գունդերի մէջ նետուեց, վրէժինդրութեամբ ծարաւած՝ շատ մարդկանց կեանքերը առաւ և վերջը ինքն էլ հարուածներ ընդունելով՝ խուռն դիակների մէջ անյայտացաւ:

Տաճկաց յաղթական բանակը մտաւ և ցըռուեց անթիւբազմութեամբ յաղթուած քաղաքի մէջ,<sup>\*)</sup> յիսուն եօթ օրուայ պաշարումը մի քաղաքի 15 դարի փառքը կործանեց: Արեամբ ողողուեցին

<sup>\*)</sup> Յոյները հաւաքուել էին Սր. Սոֆիայի հրաշակերտ տաճարում և սպասում էին, որ Աստուած իր հրեշտակները կուղարկէ նրանց վրկելու համար, սակայն չարաչար սխալուեցան, որովհետև հրեշտակների փոխարէն, երեաց Սուլթան Մահամէտ իւր զօրքով և եկեղեցում ապաւինածներին դուրս վանդեց և ինքը քարձրացաւ բեմի վրայ և իւր նամազը կատարեց «զահաբիլա», Մահամէտ ուսուլա» կանչելով:

փողոցները, 40 հազար քաղաքացի սպանուեցան, 60 հազար էլ շղթայի խփուեցան։ Միևնույն թշուառութեան մատնուեցին ամէնքն էլ, երկու-երկու, ինչպէս գէպը բերում էր, շղթայի էին զարկում և իրենց տէրերի հաճոյքների մատնուում։ պալատներ, տներ, մենաստաններ հաւասարապէս աւարի առնուեցան և շատ դարերից ի վեր ժողոված գանձերը յաղթական բարբարոսների ձեռք անցան։

Այս աւերմունքը և կողոպուտը երկու օր տևեց, վերջապէս արիւնով և ոսկով կշացան յաղթական զինուուները և իրենց կատաղութեան ժամանակ հասարակաց չէնքերին էլ սկսան կացին խփել. բայց Սուլթան Մահամէտը իսկոյն երեաց և իր ահաւոր խօսքերով հանգստութիւն և բարեկարգութիւն հաստատեց, կեանք և ազատութիւն շնորհեց այն քրիստոնեաներին՝ ուրոնք ազատուել էին այդ արիւնահեղ օրերին։ Տների մէջ ապահովութիւն հաստատուեց, յաղթուողները կրօնի ազատութիւն ստացան և իրենց հանգստութեան փոխարէն՝ վրաները տուրք նշանակուեց։

Այսպէս ահա 461 տարի է, որ հպարտ Յոյները իրենց մայրաքաղաքը տուին Օսմանեան կառավարութեան ձեռքը և իրենք, մեր հայերիս պէս, անտէր, անտիրական մնացին մինչև 1829 թուականը, երբ եւրոպական մի քանի տէրու-

թիւններ ճանաչեցին նրա ազատութիւնը և յունական մի փոքրիկ թագաւորութիւն հաստատեցին։

Առհասարակ բռնակալ տէրութիւնը վերջ չէ ունենում։ Յոյների բռնակալութեան վերջ տուեց օսմանցին, բայց օսմանցին ինքն սկսեց նրանից վատթար, շատ վատթար կերպով նեղել իր բազմալեզու և բազմակրօն հպատակներին, տանջում էր սարսափելի, անմռունչ կոտորում էր, նահատակում էր այն անմեղ արարածին, որին տարաբաղտաբար վիճակուած էր Տաճկի բռնակալութեան ներքոյ լինել։ Եւ ամենից շատ տուժել էր թշուառ հայ ժողովուրդը։

Բայց մօտեցաւ ժամանակը, արդարութիւնը պահանջում է իրենը, տուն քանդողին տուն չի լինի, Օսմանեան հոգեարք աէրութիւնը պիտի քայքայուի, որովհետև չկարողացաւ, չցանկացաւ յարգել, գնահատել այդ կաթնատու կովերին։



## ՔԱԶԱՄԻՐՏ ԱՂՋԻԿ

Վաշինկթոն քաղաքի մօտ բանակ դրած զօրքերի գնդապետին, մի օր մի երիտասարդ է ներկայանում, հետն էլ մի զօրքի խումբ:

Գնդապետը սիրով ընդունում է թէ երիտասարդին և թէ նրա գունդը:

Թիչ օրից երիտասարդը այնպէս սիրելի է դառնում և վստահութիւն ստանում, որ հետզհետէ յառաջադիմութիւն անելով ստանում է սպայի աստիճան (օֆիցերъ).

Գնդապետը գարմանում է թէ ինչպէս ճշշտութեամբ և քաջութեամբ նա կատարում է ընդունած ամեն հրամանները և ամեն երեկոյեան գեղեցիկ գրով խորին պատկառանքների հետ խառնուած հպարտութեամբ՝ ներկայացնում է նոյն օրուան տեղեկագիրը (ռապորտъ):

Բայց գնդապետը աւելի զարմանում է տեսնելով այն դեռահաստկ երիտասարդի վրայ պատերազմական խրոխտանք: Գնդապետը մի օր հարցնում է սպայի ովկ և որտեղից լինելը

իմանալու, բայց որոշ բան իմանալ չյաջողուեց և օր ըստ օրէ հետաքրքրութիւնը սաստկանալով, մտքումը դնում է, որ նոյն իսկ երիտասարդ սպային հարցնէ:

Այսպէս երբ մի օր նա ըստ սովորութեան իւր գեղեցիկ տեղեկագիրը ներկայացրել և զինուորական բարելք քաջութեամբ տալով դուրս է գնում.

«Կաց, ասում է գնդապետը, ասա ինձ, դու մրտեղացի ես: — Վաշինկթոնցի եմ, Տէր, պատասխանում է սպան: — Տարիքդ: — Երեսուն տարեկան: — Երեսուն տարեկան... ամեն տեսնողները հազիւ 18 տարի են տալի քեզ:

— Խարւում են, տէր իմ: — Սակայն խաբողը քու երեսդ է, ասաց գնդապետը ծիծառելով և շոյեց երիտասարդի երեսը: Ո՞վ կարող է հաւատալ, որ այս փափուկ երեսը երեսուն գարուն տեսած լինի: — Տէր իմ, հրաման տուէք որ գընամ իմ խմբիս գիշերուան այցելութիւնը անեմ: — Բայց ասա ինձ գոնէ, ինչ էր պատճառը որ դուն զինուորութեան մէջ մտար:

— Հայրենեաց ծառայել և փառաց դափնիով գլուխս պսակել, ասում է, զինուորական ըարելք տալիս է պատկառանքով և դուրս է գնում երիտասարդը:

Գնդապետը, հըմ, ասում է, քթի տակից ծիծառելով, մում պիտի հասկացնես թէ դու ե-

րեսուն տարեկան ես... մտքումն էլ այն է դընում, թէ երիտասարդը հօրական տանից ծածուկ փախած պիտի լինի, ով գիտէ ինչ պատճառաւ, և նրա համար է, որ թէ իւր տարիքը և թէ ծննդեան տեղը ծածկում է:

Այս մտածմունքի վրայ էր, երբ մի յիսուն-վաթսուն տարեկան մարդ, որի երեսից երեսում էր սրտի այլայլութիւնը և քաշած ցաւերը, մօտենում է գնդապետին «Տէր իմ, ասում է, ձեզ մի խնդիր ունեմ.»

Գնդապետը իբրև մի բարեսիրտ մարդ, կանչում է իրեն մօտ.

«Նստիր, ասում է, ծերուկ, ասա ինչ ծառայութիւն քեզ անել կարող եմ:

— Շատ մեծ ծառայութիւն, մանաւանդ մեծ լաւութիւն կանէք ինձ, տէր, եթէ խնդիրքս կատարէք, լսեցի, որ մի քանի ամսից ի վեր ձեր հրամանատարութեան ներքոյ զտնւում է մի երիտասարդ սպայ...

— Երիտասարդ սպայ իմ ձեռքիս տակ շատ կայ, վրայ բերեց գնդապետը: Բայց զգում է թէ խնդիրը իւր սիրելի սպայի համար պէտք է որ լինի: — Սակայն, տէր իմ, վրայ բերեց ծերուկը, կարծեմ թէ 18 տարեկան սպայ չպիտի ունենաք, նամանաւանդ մի այնպիսի շնորհալի սպայ:

Եւ ահա այն շնորհալի սպան ներս էր

մանում, ըստ սովորութեան իւր տեղեկագիրը  
մի ձեռքում, միւս ձեռքով էլ զինուորական բա-  
րև էր տալի: Յանկարծ ծերուկ օտարականը  
վէր է թռչում և փաթաթւում սպային և լացով  
հեծկտալով «Ա-խ, Վիրդինէս—իմ սիրուն աղ-  
ջիկ» կանչում է:

Գնդապետը շփոթած ոտքի է կանգնում:  
Սակայն աւելի մեծ շփոթութիւն խեղճ սպային,  
մանաւանդ թէ սպայուհին էր, որ այնպէս անա-  
կնկալ կերպով մատնում էր նրան հայրական  
գործն և կսկիծը:

Այլևս ուրիշ բան չէր մնում, բայց եթէ  
թողութիւն խնդրել հօրիցը՝ իւր փախստեան  
համար և գնդապետիցը՝ իւր խարէութեան հա-  
մար:

Իհարկէ գնդապետից իսկոյն թողութիւն  
ընդունեց և իւր որդեսէր հօրից՝ որ ամեն քա-  
շած վշտերը մոռացել էր այն երջանիկ վայր-  
կեանում:

Վիրդինայի խօսակցութիւնից յայտնի կեր-  
պով իմացաւ գնդապետը, որ նրա փախուստի  
միմիայն նպատակն էր հայրենեաց և փառաց  
սէրը, ուստի շատ գովեց նրան և հօրն էլ պատ-  
մեց թէ ինչպէս ճշտութեամբ և քաջութեամբ  
կատարում էր իւր զինուորական պարտքերը...  
Հիմա մնում էր հօրը աղաչանքին համեմատ՝ ա-  
զատել նրան, որ գնայ տուն, բայց արի տես,

որ նրա ազատութիւնը գնդապետի ձեռքումը  
չէր: Սպայուհու անունը անցել էր զինուորական  
մատեանների մէջ, և հասել մինչև պատերազմի  
նախարարի ատեանը, ուստի նրան զինուորա-  
գրութիւնից հանելու համար, պէտք էր դիմել  
պատերազմի նախարարին գրաւոր: Շատ չեր-  
կարացնենք, եղածը իմացուեցաւ, շշուկը տարած-  
ուեցաւ և ամէն տեղ զարմանքով խօսում էին.  
այն 18 տարեկան քաջասիրտ աղջկայ վրայ:

Պատերազմի նախարարութեան զօրապետ-  
ներից մէկը սքանչացած այնպիսի արիստիրո-  
սպայուհու վրայ, ինքն իւր ձեռքով բերեց նրա  
ազատութեան թուղթը և տուեց հօրը և ձե-  
րունին շնորհակալութիւն անելով «Տէր զօրա-  
պետ, չեմ իմանում սրա փոխարէնը ի՞նչ պիտի  
կարողանամ մատուցանել ձեզ իմ խնդիրքս կա-  
տարելու համար...

Պատասխանեց զօրապետը.

— «Տուէք ինձ Վիրդինէն և նրանից աւելի-  
ինձ մեծ շնորք անել չէք կարող:

Հարսանիքը տեղի ունեցաւ և Վիրդինէն  
պատերազմի դաշտում Յունաց պատերազմի  
աստուածուհու Պելոննայի պէս զօրքերի սիրութ  
վառում էր իւր քաջութեան անունովը և օրի-  
նակովը:

Մի ազգ՝ որի աղջիկները այս աստիճանի  
զգում են հայրենի և փառաց սէրը, անշուշտ իւր

առաջ մեծ ապագայ ունի: Զեմ իմանում թէ  
այս պատմութիւնս ի՞նչ ազգեցութիւն անել կա-  
րող է մեր ազգի այժմուան կանանց վրայ, բայց  
մեր մայրերը ժամանակով հիմիկուայ պէս  
վախկոտ և տկար չէին:

Առաջուան հայուհիները «չ թէ այժմւան հայ-  
ուհիների պէս շողողուն բրիլիանտներ, փայլուն  
ոսկի ու արծաթ և Փարիզեան տնաքանդ մօղա-  
ներ էին փնտում, հապա Հայի փայլուն երկա-  
թի թուրն ու նիզակը... Քանի քանիսներ ու-  
նենք մեր ազգային պատմութեանց մէջ և ի՞նչ-  
պէս սքանչելի Եղիշէն լաւ է ասում «թէ պէտ և  
էին տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին,  
բայց մոռացան զկանացի տկարութիւն և Եղին  
արուք առաքինիք»: Լսում են այս հայուհիները  
և եթէ մի ամերիկացի Վիրզինէի օրինակը  
բաւական չէ իրենց սրտերը շարժելու, թող  
լսեն բուն իրենց նախնի քոյրերի անվեհեր ազ-  
գասիրութիւնը, լսեն Այծեմիկի մի քաջութիւնը,  
որ երբ Անի քաղաքը Փատլունի պարսիկ զօրքե-  
րից պաշարուեցաւ 1124 թուականին և քաղաքու-  
մը վհատութիւն տիրեց, այն քաջասիրտ Հայ-  
ուհին սիրտ տուեց լքուած և յուսահատուած  
Հայերին:

Սամուէլ Անեցին, որ անձամբ տեսել էր  
այն քաջասիրտ հայուհուն և զարմացել էր նրա  
ազգասէր քաջութեանը վրայ, գրում է հետեւալը

«Առաքինի եղաւ մի կին պարիսպների վրայ,  
տղամարդի սիրտ ստանալով՝ քարերով հալա-  
ծում էր մօտեցողներին, որ յանդզնում էին  
պարսպին մօտենալ և իւր վէրքերը, որ դրսից  
ստանում էր, բանի տեղ չէր դնում և նրա ա-  
նունն էր Այծեամն, որ շատ յարմար էր իւր  
արագութեան համար»:

Վ Ե Ր Զ



այս պատճենում մի այլ առօղջական  
շաբաթական հարաբեկաց աշխատավոր  
ականքը առ աշխատավոր ու առ աշխատավոր  
առ աշխատավոր առ աշխատավոր  
առ աշխատավոր առ աշխատավոր  
առ աշխատավոր առ աշխատավոր



20858

## ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԵԿ

Դիմել Ն. Աղանեան տպարանին և Թիֆլիսի  
հայ գրավաճառներին.

---

10% յօքուս հայ կամաւորների